ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ք. Արարատ, Շահումյան 34, Հեռ. (0238)44747,
Ֆաքս (0238)44747

N 2012/0090

22 փետրվարի 2012թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգարժան տ-ն Քոչարյան

Ի պատասխան Ձեր 17.02.2012թ. թիվ 156-ի 1 գրության տեղեկացնում ենք, որ Արարատի քաղաքապետարանը իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում ձմռանը քաղաքի բնականոն կյանքն ապահովելու հարցերը: Քաղաքը ձյունից մաքրելու նպատակով, 2009թ. ձեռք բերվեց ձյուն մաքրող և փողոցները աղաավազային խառնուրդ շաղ տվող - բազմաֆունկցիոնալ ավտոմեքենա: Ամեն տարի ձմեռնամուտի նախօրյակին քաղաքային համայնքի ավագանու և քաղաքի շահագրգիռ կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ քննարկվում է ձմռանը նախապատրաստվելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ձյան մաքրման աշխատանքները Արարատ քաղաքում և ՈԿՖ-ի բանավանում կատարվում են «Արարատի կոմունալ ձեռնարկություն» բյուջետային հիմնարկի կողմից:

Ձյան մաքրման համար քաղաքային համայնքի ամենամյա բյուջեով նախատեսվում են համապատասխան գումարներ:

2011թ. այդ նպատակով հատկացվել է 2395.0 հազ.դրամ գումար, որով նախապես կուտակվել է 2 տոննա աղ, 100 խմ ավազ, վառելիք, ձեռք են բերվել գործիքներ և անհրաժեշտ այլ պարագաներ:

Քանի որ 2011թ.-ին Արարատ քաղաքում գրեթե ձյուն չտեղաց, կուտակած ավազն ու աղը չնչին չափով օգտագործվեցին: Դրա համար 2012թ. ձյան մաքրման աշխատանքների համար համեմատաբար քիչ գումար նախատեսվեց՝ 1950.0 հազ. դրամ:

2012թ. Արարատ քաղաքում և ՈԿՖ-ի բանավանում կազմակերպված ընթացան ձյան մաքրման աշխատանքները: Փողոցները ձյունից մաքրելու հետ միասին աղաավազային խառնուրդ էր շաղ տրվում:

Կոմունալ ձեռնարկության աշխատողների ուժերով մաքրվում են նաև մայթերն ու քաղաքային հրապարակը:

2012թ. փետրվարի 15-ի դրությամբ Արարատ քաղաքում ձյան մաքրման աշխատանքների համար ծախսվել է 650.0 հազ. դրամ գումար:

Կոմունալ ձեռնարկության կոլեկտիվը միշտ պատրաստ է ժամանակին կատարելու ձյան մաքրման աշխատանքները:

2011-2012թ.թ. ձյան մաքրման աշխատանքների համար, ըստ հոդվածների հատկացված գումարների չափի մասին տեղեկանքը կցվում է:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄ ԲԱԲԱՅԱՆ

Կատ. քաղաքապետի խորհրդական Ա. Խուրշուդյան
աշխ հեռ. (0238) 4-42-50

Տ ե ղ ե կ ա ն ք

2011թ. և 2012թ. Արարատի քաղաքային համայնքի բյուջեով ձյան մաքրման համար հատկացված գումարները

Հ/հ	Տարեթիվը	Հոդվածը	Հատկացման նպատակը	Հատկացված գումարը (հազ. դրամ)	15.02.2012թ-դրությամբ ծախսը.	Ծանոթություն
1	2011թ.	4251	Արարատ քաղաքում և ՈԿՖ-ի բանավանում ձյան մաքրման աշխատանքները կատարելու համար	2.395.0	----	Աղաավազային շաղախի մնացորդը օգտագործվել է 2012թ.-ին
2	2012թ.	4251	Արարատ քաղաքում և ՈԿՖ-ի բանավանում ձյան մաքրման աշխատանքները կատարելու համար	1.950.0	650.0	Մնացորդը կօգտագործվի 2012թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին